

ՊԵՏՐԱԿԱՆ

ՀԻՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԸ ԷԶՄԻԱԾԻՆ (*)

Էջմիածինը Հայ Առաքելական Եկեղեցւոյ Մայր Տաճարն է և Ամենայն Հայոց կաթողիկոսի Աթոռանիւսը: Յետապայտում իր անուշով կոչուեց նաև այն քաղաքը, որի սահմաններին մէջ շինուած էր Մայր Տաճարը: Պատմական անցեալում Էջմիածինը կոչուում էր նաև Վաղարշապատ:

Քաղաքը հիմնուած է Վաղարշակ թագաւորի օրով (140—117 թ. Ք. առաջ), հին Վաղարշապատի տեղում, հրրորդ և երկրորդ (Ք. առաջ) դարերի սկզբում, այսպէս կոչուած Շրէշ—Բլուր բարձունքում, Վարդգէսի ջանքերով՝ որը Արարատեան թագաւորական ընտանիքի փեսան էր:

Տրդրան Բ. (95—55 Ք. առաջ) թագաւորի օրով այստեղ հաստատուած էին հրէական այն զաղթականները, որոնք տեղահանուած էին Պաղեստինից իր արշաւանքի պատճառով:

Հայ գասական—պատմաբան Մովսէս Խոբնեացին, գրելով Վաղարշապատի հիմնադրման մասին, պատմում է որ Վաղարշակ թագաւորը քաղաքը շրջապատեց պարիսպներով, խրամատներով և անուանեց զայն Վաղարշապատ՝ ինչպէս նաև նոր—Քաղաք: Այսպէսով Վաղարշապատն իր հիմնարկութեան օրից օժտուած էր պարիսպներով, խրամատներով և ուրիշ պաշտպանողական

(*) Սոյն յօդուածը աւուում է «Ա. Էջմիածին» իտաղուում պատկերազարդ գրողէ մը՝ հրատարակուած ճարտարապէս Պր. Վ. Յարութիւնեանի ուսումնասիրութեան ի Մոսկու, 1958ին, Ռուսերէլ լեզուով: Գրողը 40 գեղեցիկ յաւանկարներով մի պատկերայն ապշու է: Ան ծանօթացնում է մեր փառաւոր յուսարձանների պատմական անցեալը եւ ներկայ դրութիւնը:

Փափաքեմի պիտի լինէր որ նման մի աշխատանք իր ամբողջութեան մէջ հրատարակուէր նայեւել լեզուով: Գրին Յաղաքարանը (էջ 5—22, երկու մասերէ կը բաղկանայ): Առաջին մասը վերաբերում է Վաղարշապատ կամ Էջմիածին քաղաքի պատմական անցեալին եւ ներկայ դրութեան: Երկրորդ մասը, որ դեռ թարգմանուած չէ, մամբամանօրէն անգրադաւունում է Մայր Տաճարի լիւ պատմութեան եւ ճարտարապետական մամբամանօրէններին:

Ծանօթ. Թարգմանիչ

միջոցներով, որոնք բնորոշում էին հնագործեան քաղաքների պաշտպանողական եւ պահակը:

Մի ուրիշ հայ պատմագէտի՝ Ազարթանգեղոսի տեղեկութիւնների համաձայն, քաղաքի պարիսպները օժտուած էին մուտքի դուռներով, որոնք ուղղութիւն էին տալիս քաղաքին մօտեցող ճամբաներին: Այդ դուռներից մէկը բացուում էր այսպէս կոչուած Արտաշատի գլխաւոր ճամբուն վրայ, իսկ ուրիշները յատկապէս հարաւային կողմերը բացուում էին զէպի գետը եւ նրա վրայ զբաւուած կամուրջը: Հարաւային կողմից քաղաքը պաշտպանուած էր խորունկ խրամատով, որը կոչուում էր «Փակէն—փոս» և հեղեղում էր Մեծամոր գետի ջուրերով: Այս լճացած ջրերը պաշտպանում է ներփակում էին քաղաքը հարաւ—արեւմտեան կողմից և ամենայն հաւանականութեամբ մեծ գիր են խաղացել քաղաքի պաշտպանութեան գործում:

Հիւսիս—արեւելեան կողմից, քաղաքի պարիսպներին բաւական մօտ, տարածուած էին ընդարձակ խաղողի այգիներ, որոնք մեծ գիր էին խաղացել քաղաքի տնտեսական կենսքում: Տրդատ Գ. թագաւորի (273—330 Ք. յետոյ) պալատը գտնուում էր քաղաքի բարձր մասում, որը շրջապատուած էր պարիսպներով: Բացի պալատից, այնտեղ կային նաև ուրիշ շէնքեր՝ որոնք իրարու հետ կապուած էին պարիսպից ներս գտնուող փողոցներով:

Այսպէսով, Վաղարշապատն ինքն իրեն կառուցուածքով ներփակում էր քաղաքաշինական արհեստի յատկանշական գծեր, որոնք նախնւած էին Արարատեան ուրիշ քաղաքների ձևերն: Պաշտպանութեան ձևը պարունակում էր պարսպային շրջափակերո, հողային թուրքեր, խրամատներ և փոսեր՝ լեցուած ջուրով:

Եթէ նկատի առնենք այն հաղամանքը որ Վաղարշապատը օժտուած չէր բնական պաշտպանողական միջոցներով և դիրքով, ինչպէս պատմական Հայաստանի մի շարք ուրիշ քաղաքները, ապա վերսրիշու պաշտպանողական միջոցները — ամրութիւնները — մեծ գիր պիտի խաղացած լինին քաղաքի պաշտպանութեան և ապահովութեան գործում:

Այս դրութիւնը անպայմանօրէն գնահատութեան է արժանացել Հռոմէականացիներին կողմից, որոնք Արտաշատի կրկնակի աւերածումից յետոյ, 163 թուին, հաստատուեցին Վաղարշապատում և կոչեցին զայն Keine Polis և յայտարարեցին որպէս Հայաստանի մայրաքաղաք: Դառաքի պատմութեան այս դարձըմանի մասին, քացի անմիջական պատմագրական յիշատակումներով, մեզ պատմում և ապացուցում են Տնայած յուշարձաններին վկայութիւնները, որոնցից ամենաշատ հետաքրքրութիւն են յայտնաբերում երեք քարերի վրայ փորագրուած արձանագրութիւնները: Արանցից մէկը յունարէն է և միւս երկուսը լատիներէն: Եւրոպէնը գերեզմանաքարի արձանագրութիւն է նշնեցիաւ ռուզուած, իսկ Տնայած երկու լատիներէն արձանագրութիւնները նուիրուած են քաղաքում հաստատուած հռոմէական բանակի արած շինարարական աշխատանքին: Այս գործունէութիւնը երկար չէ տեւած սակայն վերսկսուած հայկական ապստամբութիւնների ճնշումից և Արտաշատի կործանումից յետոյ, որ տեղի ունեցաւ Մարցիոս Վերյի հրամանատարութեամբ: Այս ապստամբութիւնները տեւեցին մինչև 185 թուականը: Տնայած այդ արձանագրութիւնները չեն նշում շինարարական աշխատանքների տեսակի և չափի մասին, բայց պիտի ենթադրել որ այդ տեղում հաստատուած Հռոմէական բանակը վերականգնեցրել և կատարելագործել է զինուորական կեդրոնը՝ ըստ հռոմէական սովորական մեթոտների:

Վաղարշապատի նշանակութիւնն աւելի ուժեղացաւ և զարկ առաւ երբ Հայաստան պաշտօնապէս ընդունեց քրիստոնէական կրօնը 301 թուին: Այսպէսով Վաղարշապատը դառնում է ոչ միայն մայրաքաղաք վարչական տեսակէտով, այլ նաև հոգեոր կենդրոն:

Քաղաքի կենդրոնում բարձրանում է Ս. Էջմիածին Եկեղեցին, ինչպէս և Գայլանէ, Հսիփսիմէ և Շողակաթ մատուռները:

Այս նոյն շրջանում սկիզբն է առնում և տարածում աւատապետական դրութիւնը, որը իր կարգին անդրադառնում է աւատապետական քաղաքակրթութեան տարածման և կազմակերպման: Մեծագոյն

դէպքը որ տեղի ունեցաւ այս շրջանում, Հայերէն տառերի գիւտն էր Մեսրոպ Մաշտոցի միջոցաւ, Դ. դարի վերջում՝ որն իր կարգին պատուանդան եղաւ Ե. դարի պատմագրական և գրական առաջացման:

Երկրի զարգացումն իր ամբողջութեան մէջ ընթացել և գունաւորուել է արեւելքի և արեւմուտքի յափշտակչների գրաւումների պայքարով, որն անշուշտ արգելք և սպառնալիք է հանդիսացել նրա խաղաղ և արդիւնաւէտ կեանքին:

Պարսից թագաւոր Շապուհ Բ-ի յարձակումների շրջանում, 364-369 թուերին, հայկական մի շարք քաղաքներ, որոնց թւում նաև Վաղարշապատը, կործանման ենթարկուեցին: Այս պատճառով, հայերը Ե. դարում Մայր Աթոռը փոխադրեցին Դուին՝ որպէս նոր մայրաքաղաք:

Մշտական և անհաւասար պայքարները շատ թուլացրին Արշակունեան թագաւորութեան կեցումը, որը վերջնականապէս վերջ գտաւ 429ին:

Այս դէպքից յետոյ, Հայաստանը մըրցակցութեան դաշտ է դառնում Սասանեան Պարսկաստանի և Բիւզանդական կայսրութեան միջև, որի անմիջական հետեանքն եղաւ Հայաստանի քաժանուում Արեւելքի և Արեւմուտքի մէջ: Այս բոլոր կորուստներից, կործանումներից յետոյ էլ ազատասէր և անյաղթելի Հայ ժողովուրդը շարունակեց իր անհաւասար բայց հերոսական պայքարն իր ազատութեան և անկախութեան համար: Ժողովրդական ապստամբութիւնների շնորհիւ (451, 481, 485 թ.), Պարսից տիրապետները ստիպուած եղան հրաժարելու իրենց անկուշտ, բռնակալ և կործանարար գործունէութիւնից և ճանաչեցին Հայաստանի ներքին անկախութիւնը: Պարսիկների այս նոր քաղաքականութիւնը Հայերին հնարաւորութիւն տուեց հետեւելու իրենց յառաջդիմական գործունէութեան:

Եթեկերորդ դարը յայտնի եղաւ իր շինարարութեամբ: Այդ զարթոնքի մի շրջան էր, բնորոշուած իր աւատապետական ճարտարութեամբով: Էջմիածնի Տաճարը հիմնական վերաշինութեան ենթարկուեց: Հսիփսիմէի, Գայլանէի և Շողակաթի մատուռների փոխարէն հաստատուեց եկեղեցիներ շինուեցան:

Հուարթնոցի հոյակապ շէնքը կառուցուեց անյախի մի ծրագրով, որ նա միանոյն ժամանակ ներփակում էր իր մէջ ներսէն Գ. Ի. Վիհարան-Պալատը, ուր և է. զարրի կէսերում կաթողիկոսի աթոռանիստը Դուրից փոխադրուեց և հաստատուեց:

Եօթներորդ զարրի կէսում տեղի է ունենում Հայաստանի գրաւումը Սրաքնիւրի կողմից: Սրան յաջորդող զարրի շրջանում Վաղարշապատը պատմագրութիւնների մէջ աւանդականօրէն յիշուում է որպէս քաղաք. որովհետեւ նա կորցրել էր այլեւս իւր առաջնական փառքն ու ազդեցութիւնը:

Իսկարատունեաց Հարստութեան շրջանում (Ժ. - ԺԼ. դար), երբ Հայերն ազատուեցին Արաբական լուծից. Վաղարշապատի մէջ նշուում է որոշ շինարարական գործունէութիւն և զարթոնք, բայց այն էլ ԺԳ. դարում, Մանդուկան արշաւանքների հետեանքով, երկար չի տեսնուում և Վաղարշապատը նորից անկումի և կործանման ենթարկուեց: Մայր Տաճարը հրդեհի և կողպուտի ճարակ եղաւ, բնակիչների կէսն էլ բնաջնջման ենթարկուեցին: Այս արհաւիրքի բերումով, կաթողիկոսական Սթոուր Կիրիկիա փոխադրուեց:

ԺԵ. դարից սկսած, նորից սկսում է իշխմամբն վանքի վերակենդանութիւնը. այն էլ այն հնագիտական, որ 1375 թուին Կիրիկիայի թագաւորութեան անկման պատճառով, Մայր Աթոռը նորից Ս. Էջմիածին է փոխադրուում: Կիրիկիայ իշխանութեան անկումը պատճառ եղաւ նաև հոն գտնուող Մայր Աթոռի ազդեցութեան թուլացումին և ոչնչացումին մայր երկրի զանգուածների մէջ: Քաղաքական որոշ հաշիւներով թուրք-մենական տիրապետները, որոնք հաստատուած էին Սրաքնում, յարմար համարեցին վերակենդանացնել Հայկական Սկիզբիցին և օգնել վերակառուցելու Էջմիածինը իր իսկ սահմաններին մէջ: Այս շրջանում վերաբացում, վերակենդանանում են հայկական եկեղեցիները, կատարում են շինարարական աշխատանքներ, աւերում են Սրաքնի Սթոուր կուսակցութիւնը, ինչպէս և զարգանում է վանքի իւրայատուկ տնտեսական վիճակը:

Պարսկական կառավարութեան անտանելի լուծի տակ, ԺԶ. դարուց սկսած, հայ

ժողովուրդի կրօնական, կրթական, հոգեկան կենդանւում Էջմիածինը շարունակեց իր առաջնորդող դերը հայութեան տարող պատմութեան ընթացքում և կամոց կամաց վերստանդեց իր նախկին ժողովրդականութիւնը:

1828 թուին, Սրաքնում Հայաստանը գրաւուեց Ռուսաստանի կողմից և սրանով վերջ գտաւ բազմադարեան պարսկական տիրապետութիւնը, որն իր հերթին մի կարևոր անկիւնադարձ էր իայ ժողովուրդի պատմութեան և կեանքի համար: Այս պայմանների թերութիւնով, տնտեսական ընդհանուր վերելքի ընթացքում սկսուեցին զարգացման ուղիի մէջ մտնել Սրաքնը, Արեւիկայի Սրաքնը, Վաղարշապատը և ուրիշ քաղաքներ: Սրանց հետ միասեղ զարգանում է նաև Էջմիածնի տնտեսական, հոգեւոր և կրթական ուժը, ինչպէս և իր ժողովրդականութիւնը:

Նին Վաղարշապատի և միջնաբերդի ճշգրիտ սահմանները դեռ չեն յայտնաբերուած, սակայն ենթադրուում է որ նա գրաւում էր ներկայ Էջմիածնի տեղը:

Մովսէսական իշխանութեան տակ, Վաղարշապատը դառնում է հանրապետութեան շրջանաւրտ կենդանւորից մէկը և զգալիօրէն փոխած է իր արտաքին տեսքը: Ընդհանուր շինարարական և վերակազմման ծրագրերի կիրարկումով, Էջմիածինն այժմ կերպարանափոխուած է: — Քաղաքի վերահիշուեցնում ծրագրերը կազմուած էին 1939 թուին՝ ճարտարապետ Ս. Մանուկեանի միջոցով. սակայն ներկայիս, հսկայ առաջացման չափին նայելով, նախկին ծրագրերը անբաւարար է նկատուում և այդ պատճառով փոփոխութիւնների պէտք է զգացուում:

Քաղաքի զլխաւոր պողոտաների վրայ, Միասնիկեանի և Աթաբէգեանի անուններով, կառուցուած են մեծ քանակութեամբ բնակութեան և հանրային սպասարկութեան շէնքեր: Նրանցից շատերը օժտուած են ճարտարապետական բարձր որակով, ինչպէս, օրինակ՝ Կոլխոզների կրթական տունը, Կուրանցիները, շրջանակային ճանապարհների գրասենեակը, և այլն:

Նին թաղերի վերանորոգութեան ընթացքին, նորարաց պողոտաների վրայ շինուել

«ՍԻՈՆ»Ի ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ս Ի Ջ Ի Ն Ք

Թէհրանէն Պր. Մ. Ս., Սիոնի կմբա-
գրութեան ուղարկած իր փետր. 16 թուա-
կիր նամակին մէջ կը գրէ.

«Կը փափաքեմ իմանալ Միջինք բուռ-
ածը, այսինքն մեծ պահքի ճիշդ մէջնեղի
չորեքշաբթի օրը, կրօնական, եկեղեցա-
կան տեսակէտով ի՞նչ նշանակութիւն
ունի կամ կրնայ ունեցած ըլլալ անցեա-
լին մէջ. հաւատացեալ հայ ժողովուրդին
որ եւ ըսն կը թելադրէ՞ կամ կը պար-
տադրէ՞ այս առթիւ. ի՞նչ են եղած ընդ-
Պանրոպէս մեր աւանդական սովորու-
թիւնները այս օրուան համար եւ այլն:
Նաեւ կարելի՞ է ընդունիլ այս օրը իբր
ուրախութեան եւ խրախմանքի օր նոյն
իսկ անոնց համար որոնք ոչ ծոմ է ոչ
ալպահք պահած են մեծ պահքին օրերը:
Շատ շնորհապարտ պիտի կացուցանէք
զիս եթէ բարեհաճէք այս մասին փոքր
բացատրութիւն մը տալ Սիոնի յառաջի-
կայ մէկ թւին մէջն:

են հանգստաւէտ բնակարաններ, Նիկիային
էջմիածնի բնակչութեան թիւը հասնում է
մօտ 20,000-ի:

Քաղաքի գետինների վրայ տեղաւոր-
ուած են «Ելիսոփ Միլիոնատէր» եւ մի քանի
արդիւնարեւրական ձեռնարկներ, շրջանային
եւ բաւական թուով կրթական հիմնարկներ,
ինչպէս Մանկավարժական Տիւնիկուսը եւ
երաժշտական դպրոցները: Մշակութային
զարգացման հիմնարկների շարքում կարելի
է նշել Կոլիսոփ (Մշակոյթի Տունը, բանաս-
տեղծ Յովհաննէս Յովհաննէսեանի Տուն-
թանգարանը, սինէմայի շէնքը եւ հանրային
պարտէզը՝ մշակոյթի եւ հանգստի համար):
Այսպէսով, էջմիածինը վերափոխուում է եւ
դառնում Հայաստանի Հանրապետութեան
ծաղկող քաղաքներից մէկը:

ՎԱՐՍԱՋԻԱՏ ԹԱՐՈՒԹԻՒՆՆԵԱՆ
(ձարսարապէս)

Թրգմ. ԳՐԻԴՈՐ ԱԼԵԱՆԱՔՔ՝ Պաղտս

Յարգելի նամակագրին հարցադրու-
թիւնը չափով մը գոհացուցած ըլլալու
համար կու տանք հետեւեալ ծանօթութիւն-
ները եւ բացատրութիւնները:

Եկեղեցական տեսակէտէ Միջինքի չո-
րեքշաբթի յիշատակելի է անով որ ա՛յդ
օր կը սկսի երգուիլ մէկ տուն ստեղի
շարական խաղաղական ժամերգութեան
վերջը:

Աղբաղբաղական տեսակէտէ կ'արժէ յիշել
թէ կորէ մը հոյակապ գաւառներու մէջ
սովորութիւն կար որ նշանուած երիտա-
սարդներու տուններէն իրենց հարսնե-
ցուին տունը փոքր նուէր մը կը զրկուէր
այդ օրը: Կրնե՞ն ալ կը պատրաստէին
պահոց յատուկ բացառիկ կերակուրներ,
մանաւանդ անուշեղէններ, կամ հատիկ
— խաշած ցորեն — խառնուած ընկոյզով
եւ շաքարով:

Միջինքի յատուկ ուրախութիւնները
իրաւունքն են անոնց՝ որոնք պահքի եւ
արամութեան օրերը կէս ըրած են եւ հասած
յիշատակելի հանգրուանի մը: Իսկ անոնք
որոնք մեծ պահքի շրջանին ոչ ծոմ է ոչ
ալ պահք պահած են մինչեւ այդ օր, եթէ
այդ օրը իրենց սովորական սահմանադանց
խրախմանքներէն հրաժարելով ուղեն մաս-
նակցիլ պահեցողներուն օրինակսը ուրա-
խութեան, այդպիսիներուն մասնակցու-
թիւնը կարելի չէ մերժել: Թերեւս ասիկա
առիթ մը կը հանդիսանայ որ իրենք ալ
խառնուին պահեցողներու խումբին եւ միտ-
սին շարունակեն պահել մինչեւ Զատիկ:

Հաւատացեալ հայ ժողովուրդին ուղ-
ղուած թելադրութիւն մը եթէ ուղենք
գտնել Միջինքի մէջ, այդ պիտի ըլլար
յարատեւութիւն պահեցողութեան մէջ,
զգուշանալով ոչ միայն արգիլուած կե-
րակուրներ ձուլակելէ, այլ նաեւ զգուշա-
նալով արգիլուած խօսքեր — հայոցու-
թիւն, անէծք, սուտ, երգում եւ այլն —
արտաբերելէ, եւ արգիլուած գործեր —
գողութիւն, յափշտակութիւն, կռիւ եւ
այլն — ընելէ: Եւ այսպիսի պահեցողու-
թեան մը թելադրութիւնը կը կարծենք
թէ անարժէք չէ:

Ն. Ե.